



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՎԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

4 ապրիլի 2011թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Մ. Թովուկյանի

Քննության առնելով «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Յ .

1. «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ն 21.03.2011թ. դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը, եւ խնդրել է այն ճանաչել ՆՏ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Դիմողը գտնում է, որ ՆՏ սահմանադրական դատարանի ՍԴՈ-873 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների արդյունքում, «ՆՏ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՕ-135-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո էլ ապահովված չեն վարչական արդարադատության եռաստիճան համակարգում վերաքննիչ վարչական դատարանի մարչելիությունը, արդյունավետությունը եւ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները:

Դիմողի պնդմամբ, գործերի ընդունման հարցերում վարչական վերաքննիչ դատարանի դրսեւորած մոտեցման արդյունքում անհնարին է դարձել վերաքննիչ դատարանի իրավասությունների շրջանակում «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի՝ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների պաշտպանությունը:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը որպես վերջնական դատական ակտ ներկայացրել է ՆՏ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը, սակայն ՆՏ վարչական

դարավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Վերաքննիչ դարարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը սրանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում», որը, սակայն, չի պահպանվել դիմողի կողմից: Այսպիսի պայմաններում դիմողը չի սպառել ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Սահմանադրական դարարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ներպետական դարական պաշտպանության միջոցները:

«Սահմանադրական դարարանի մասին» ՏՏ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դարարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ, իսկ որպես անհարական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Մինչդեռ դիմողն ընդհանրապես որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ: Դիմողն ընդամենը մեկնաբանել է ՏՏ վերաքննիչ դարարանի 2011 թվականի փետրվարի 11-ի որոշումը՝ մասնավորապես նշելով, որ ընկերությունը միջնորդել է վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ եւ հարգելի համարել բաց թողնված դարավարական ժամկետները, իսկ վերաքննիչ դարարանը բողոքը վերադարձրել է այն պարճառաբանությամբ, որ վարչական դարարանի դարական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում է վերաքննիչ դարարանը, եթե ՏՏ վարչական դարավարության օրենսգրքում սահմանված կարգով դարական ակտերի դեմ չի ներկայացվել վճռաբեկ բողոք եւ առկա չեն վճռաբեկ դարարանի իրավական դիրքորոշումները՝ արտահայտված դարական ակտով:

Դիմումի ընդհանուր փրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապարասխան դարական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց:

ՏՏ սահմանադրական դարարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխարակարգային որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դարարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դարարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Բացի դրանից, դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ

չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պարզառահեպեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՆՏ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արվա- հայրած իրավական դիրքորոշման, անհարական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կերի եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ ՆՏ սահմանադրական դատարանի թիվ 2 դարական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ



4 ապրիլի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-5